# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Ծաղկաշեն 3-րդ փող. N 31
էլ-փոստ tsaghkashen.gegharquniq@mta.gov.am
Հեռ. 077 870323
17.12.2018թ

13 Դեկտեմբերի 2018 թվականի N 10 նիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱԶԻ ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018Թ-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 10 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝ Ծաղկաշեն համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծաղկաշեն համայնքի ավագանու 2018թ-ի դեկտեմբերի 13-ի թիվ 10 հերթական նիստի օրակարգը :

ՕՐԱԿԱՐԳԸ

1.Ծաղկաշեն համայնքի վարչական սահմաններում գտնվող հողի հարկի , հողի վարձավճարի և գույքահարկի պարտքի (ապառքի) գանձման ժամանակացույցի մասին :
2. 2019 թ-ի համար Ծաղկաշեն համայնքի ղեկավարի վարձատրության չափը հաստատելու մասին :
3. 2019 թ-ի հանար համայնքապետարանի աշխատակազմի թվաքանակը , հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին :
4 . Հ Հ Գեղարքունիքի մարզի Ծաղկաշեն համայնքի 2019 թ-ի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի մասին :
5. Ծաղկաշեն համայնքի 2019 թ-ի բյուջեն հաստատելու մասին :
6. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծաղկաշեն համայնքի տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

Կողմ - 4 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

1.Խաչատրյան Կամո
2.Պետրոսյան Պետրոս
3. Օհանյան Ցոլակ
4 .Օհանյան Էդիկ

Համայնքի ղեկավար՝ Գ. Կարապետյան

Աշխ. Քարտուղար՝ Հ. Սարգսյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


գ. Ծաղկաշեն 3-րդ փող. N 31
էլ-փոստ tsaghkashen.gegharquniq@mta.gov.am
Հեռ. 077 870323

17.12.2018թ

# ՈՐՈՇՈՒՄ N 24

«13» դեկտեմբերի 2018 թվականի N 10 նիստ

***ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ,ՀՈՂԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՊԱՐՏՔԻ (ԱՊԱՌՔԻ)ՄԱՆՁՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով

*Ծաղկաշեն համայնքի ավագանին որոշում է.*

1. Հաստատել Ծաղկաշեն համայնքի վարչական սահմաններում գտնվող հողի հարկի , հողի վարձավճարի և գույքահարկի պարտքի (ապառքի)մարման ժամանակացույցը ըստ հավելված 1
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ - 4 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

1.Խաչատրյան Կամո
2.Պետրոսյան Պետրոս
3 Օհանյան Ցոլակ
4 Օհանյան Էդիկ

Ծաղկաշեն համայնքի ղեկավար / / Գ. Կարապետյան
Իսկականի հետ ճիշտ է
աշխ. քարտուղար / Հ. Սարգսյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՍՏ ՀԱՐԿԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՊԱՌՔՆԵՐԻ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ ՄԱՐՄԱՆ

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

*/ Հազար դրամ /* հավելված 1

| *Անվանում* | *Հարկ* | *Տույժ* | *Ընդամեն* | *Տ Ա Ր Ի Ն Ե Ր* | |
|---|---|---|---|---|---|
| | | | | *2019թ* | *2020թ* |
| *Հողի հարկի ապառքների մարում* | 1573.7 | 887.5 | 2461.2 | 1773.7 | 687.5 |
| *Հողի վարձավճարի ապառքների մարում* | 457.8 | 0 | 457.8 | 457.8 | 0 |
| *փոխադրամիջոցների ապառքների մարում* | 306.5 | 13.2 | 319.7 | 319.7 | 0 |
| *Շենք-շինությունների ապառքների մարում* | 5.6 | 4.8 | 10.4 | 10.4 | 0 |
| *ԸՆԴԱՄԵՆԸ* | **2343.6** | **905.5** | **3249.1** | **2561.6** | 0 |

*Ծաղկաշեն համայնքի ղեկավար՝* *Գ. Կարապետյան*

*Աշխ. քարտուղար՝* *Հ. Սարգսյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՇԵՆ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Ծաղկաշեն 3-րդ փող. N 31
էլ-փոստ tsaghkashen.gegharquniq@mta.gov.am
Հեռ. 077 870323
17.12.2018թ

## ՈՐՈՇՈՒՄ N 25

«13» դեկտեմբերի 2018 թվականի N 10 նիստ

2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրեքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով ,28-րդ հոդվածի պահանջներով և <<Իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 20 հոդվածով՝ Ծաղկաշեն համայնքի ավագանին որոշում է .

1.Հիմք ընդունելով համայնքի 536 բնակիչների թվաքանակը 2018 թվականի համար Ծաղկաշեն համայնքի ղեկավարի վաձատրության չափը սահմանել Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի 28.73% չափով՝ 190000(մեկ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ.

2.Համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին որոշումը սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել լիազոր մարմին՝ իրավական փորձաքննության և պետական գրանցման .

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.Օհանյան Էդիկ
2.Օհանյան Ցոլակ
3.Պետրոսյան Պետրոս
4. Խաչատրյան Կամո

Ծաղկաշեն համայնքի ղեկավար / / Գ. Կարապետյան

Իսկականի հետ ճիշտ է

Աշխ. քարտուղար / / Ղ. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՆՔ

# 2019 ԹՎԱԿԱՆԻ ԾԱՂԿԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՇԵՆ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


գ. Ծաղկաշեն 3-րդ փող. N 31
էլ-փոստ tsaghkashen.gegharquniq@mta.gov.am
Հեռ. 077 870323

17.12.2018թ

## ՈՐՈՇՈՒՄ N 26

«13» դեկտեմբերի 2018 թվականի N 10 նիստ

### 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻԿԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28 –րդ կետով ,34-րդ հոդվածի կետերով և <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 20 –րդ հոդվածով՝

Ծաղկաշեն համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Ծաղկաշենի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N1 հավելվածի :
2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին որոշումը սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել լիազոր մարմին ՝իրավական փորձաքննության և պետական գրանցման :
3. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 08-ի N 3 որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

. Կողմ 4 Դեմ 0 Ձեռնպահ 0

1.Օհանյան Էդիկ
2.Օհանյան Ցոլակ
3.Պետրոսյան Պետրոս
4. Խաչատրյան Կամո

Ծաղկաշեն համայնքի ղեկավար / / Գ. Կարապետյան
Իսկականի հետ ճիշտ է
Աշխ. քարտուղար / / Յ. Սարգսյան

Հավելված 1

Ծաղկաշեն համայնքի ավագանու

13.12.2018թ  N 26 որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻԹՎԱՔԱՆԱԿ 6 (վեց) ԱՇԽԱՏԱԿԻՑ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1.0 միավոր | Համայնքի ղեկավարի աշխատավարձի 81.58% | 155000(մեկ հարյուր հիսւնհինգ հազար) |
| 2 | Աշխատակազմի քարտուղար | 1.0 միավոր | Համայնքի ղեկավարի աշխատավարձի 81.58% | 155000(մեկ հարյուր հիսունհինգ հազար) |
| 3 | Գլխավոր մասնագետ՝ հաշվապահ | 1.0 միավոր | Համայնքի ղեկավարի աշխատավարձի 74.7% | 142000(մեկ  հարյուր քառասուներկու հազարա) |
| 4 | Առաջատար մասնագետ | 1.0 միավոր | Համայնքի ղեկավարի աշխատավարձի 73.68% | 140000(մեկ հարյուր քառասուն հազար) |
| 5 | Մշակույթի տան աշխատակից | 1.0 միավոր | Համայնքի ղեկավարի աշխատավարձի 42.1 % | 80000(ութսուն հազար) |
| 6 | Հավաքարար | 1.0 միավոր | Համայնքի ղեկավարի աշխատավարձի 51.58% | 98000(իննսունութ հազար) |

Համայնքի ղեկավար՝ Գ. Կարապետյան

Աշխ. քարտուղար՝ Հ. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՇԵՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Ծաղկաշեն 3-րդ փող. N 31
էլ-փոստ tsaghkashen.gegharquniq@mta.gov.am
հեռ. 077870323
17.12.2018թ

# ՈՐՈՇՈՒՄ N 27

13 դեկտեմբերի 2018 թվականի N 10 նիստ

## ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ ,9-րդ, 10-րդ, 11-րդ և12-րդ հոդվածների դրույթներով՝

**Ծաղկաշեն համայնքի ավագանին որոշում է**

1.Սահմանել ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծաղկաշեն համայնքի 2018թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը.

Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1.ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. Մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 10001դրամ.

բ. 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 10001 դրամից մինչև 13001դրամ.

գ. 51-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 13001 դրամից մինչև 20001 դրամ.

դ. 101-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 20001դրամից մինչև 25001 դրամ

ե. 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 25001դրամից մինչև 45000 դրամ:

զ. 501 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 45000 դրամից մինչև 101000 դրամ:

2.Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա.մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում մինչև 10001դրամ.

Բ. 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 10001դրամից մինչև 13001դրամ:

Գ.51-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 13001դրամից մինչև 20001դրամ:

Դ.101-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում

վաճառքի կազմակերպման դեպքում 20001դրամից մինչև 25001դրամ
Ե.201 մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 25001դրամից մինչև 45001դրամ:
Զ.501 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 45001դրամից մինչև 100001 դրամ:
Համայնքի տարածքում տեղական վճարներ սահմանել
3. Համայնքում աղբահանության աշխատանքների իրականացնելու նպատակով , իրավաբանական անձանց հետ կնքել պայմանագիր հետևյալ դրույքաչափերով՝
ա) Առևտրի / այդ թվում շուկաների / , հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ՝ 50 դրամ (1 քառ. մ)
բ) Արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ՝ 10 դրամ (1 քառ. մ)
գ) Կրթական , մշակույթային , առողջապահական , սպորտային , գիտահետազոտական շինություններ՝ 3 դրամ (1 քառ. մ)
դ). Համայնքի բնակչությանը մատուցվող ծառայության համար սահմանել՝ ըստ հասցեի հաշվառում ունեցող և բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ՝ 100 դրամ :
ե). Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ ըստ ծավալի մեկ խորանարդ մետր աղբի համար ՝ առավելագույնը 3000 դրամ , կամ ըստ զանգվածի ՝ մեկ տոննա աղբի համար ՝ առավելագույնը 10000 դրամ :
4.Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի մասին մասին որոշումը սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել լիազոր մարմին՝ իրավական փորձաքննության և պետական գրանցման:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

ԿՈՂՄ -4 Դեմ-0 Ձեռնպահ-0

1.Օհանյան Էդիկ
2.Օհանյան Ցոլակ
3.Պետրոսյան Պետրոս
4.Խաչատրյան Կամո

Ծաղկաշեն համայնքի ղեկավար՝ / / Գ. Կարապետյան
Իսկականի հետ ճիշտ է
Աշխ. քարտուղար / / Հ. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Ծաղկաշեն 3-րդ փող. N 31
էլ-փոստ tsaghkashen.gegharquniq@mta.gov.am
Հեռ. 077 870323
17.12.2018թ

# ՈՐՈՇՈՒՄ N 28

«13» դեկտեմբերի 2018 թվականի N 10 նիստ

## *ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 Թ-Ի ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն « Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի և « ՀՀ բյուջետային համակարգի մասին » ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի,*
***համայնքի ավագանին որոշում է՝***

1. *Հաստատել Ծաղկաշեն համայնքի 2019թ-ի բյուջեն.*

*ա. Եկամուտների գծով՝ ------------------------------------------- 17623.0 հազար դրամ*

*բ. Ծախսերի գծով՝ ------------------------------------------- 19420.6հազար դրամ*

*գ. Դեֆիցիտը՝ ------------------------------------------- 1797.6 հազար դրամ*

2. *Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն **հատված 1-ի***
3. *Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառական դասակարգման՝ համաձայն **հատված 2-ի***
4. *Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն **հատված 3-ի***
5. *Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտը՝ համաձայն **հատված 4-ի***
6. *Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն **հատված 5-ի***
7. *Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն **հատված 6-ի***
8. *Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրը՝ վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը – 1039.2 հազար դրամ և*
*Համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցների տարեսկզբի մնացորդ --- 758.4 հազ. դրամ*

*9..Համայնքի վարչական բյուջեի 1039.2 հազ.դրամ տարեվերջի ազատ մնացորդը և Համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցների տարեսկզբի մնացորդ --- 758.4 հազ. դրամ ուղղել համայնքի բյուջեի ֆոնդային մաս՝որից*

*ա. 01.1.1. գործառնական դասակարգման 5122 տնտեսագիտական հոդվածին,համակարգչային սարքավորումներ ձեռք բերման համար – 700.0 հազ. դրամ:*

*բ. 01.1.1. . գործառնական դասակարգման 5113 տնտեսագիտական հոդվածին, համայնքապետարանի շենքի կապիտալ վերանորոգում- 1097.6 – հազ.դրամ:*

*10. Համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ,համայնքի ֆոնդային բյուջե հատկացված 500.0 հազ.դրամը ուղղել՝*

*ա/ 01.1.1. գործառնական դասակարգման 5122 տնտեսագիտական հոդվածին՝Գրասենյակային կահույքի ձեռք բերում – 500.0 հազ. դրամ*

*11.« ՀՀ բյուջետային համակարգի մասին » ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝*

*ա/ թույլատրել համայնքի ղեկավարին՝ կատարելու բյուջեով իրականացվող յուրաքանչյուր ծրագրի գծով սահմանված գումարի 15 % չափաքանակը չգերազանցող ներքին վերաբախշումները՝ ըստ տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև,*

*բ/ սահմանել, որ բյուջեով նախատեսված ծախսային ծրագրերի միջև վերաբախշումների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել այդ ծրագրերի համար հաստատված ընդհանուր գումարի 15 % -ը:*

*12.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

Կողմ - 4 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

1.Խաչատրյան Կամո
2.Պետրոսյան Պետրոս
3 Օհանյան Ցոլակ
4 Օհանյան Էդիկ

Ծաղկաշեն համայնքի ղեկավար / / Գ. Կարապետյան

Իսկականի հետ ճիշտ է
Աշխ. քարտուղար / / ՀԴ. Սարգսյան

## Քաղվածք

Ծաղկաշեն համայնքի ավագանու 13-ը դեկտեմբերի 2018թ-ի թիվ 10 նիստի N 28 որոշում

գյուղ Ծաղկաշեն

Համայնքի ավագանին քննարկելով Ծաղկաշեն համայնքի ղեկավարի կողմից ներկայացված համայնքի 2019 թ-ի բյուջեն , քվեարկությամբ՝ կողմ՝ 4 դեմ՝ 0 ձեռնպահ՝ 0

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Հաստատել 2019 թ-ի բյուջեն
   ա. եկամուտների գծով ------ 17623.0 հազ. դրամ
   բ. Ծախսերի գծով ------ 19420.6 հազ. դրամ
   գ. Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդ --- 1039.2 հազ. դրամ
   դ. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդ --- 758.4 հազ. դրամ
   ենթակա է ուղղման համայնքի բյուջեի ֆոնդային մաս ---- 1797.6 հազ. դրամ
   ե. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտը ----- 1797.6 հազ. դրամ
2. Համայնքի բյուջեի վարչական մասի եկամուտներից ձևավորել պահուստային ֆոնդ --- 900.0 հազ. դրամ
3. Համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆինանսական միջոցներ ուղղել համայնքի բյուջեի ֆոնդային մաս ------ 500.0 հազ. դրամ
4. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝
   ա. Հարկեր և տուրքեր ------- 5061.0հազ. դրամ
   1. Գույքային հարկեր անշարժ գույքից -------- 3586.5 հազ. դրամ
   այդ թվում՝
   1. 1. Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար ----- 27.6 հազ. դրամ
   1. 2. Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար ------ 3572.7 հազ. դրամ
   2. Գույքային հարկեր այլ գույքից ------- 1436.7 հազ. դրամ
   այդ թվում՝
   2. 1. Գույքահարկ փոխադրամիջոցների համար -------- 1436.7 հազ. դրամ
   3. Տեղական տուրքեր -------- 24.0 հազ. դրամ
   բ. Այլ եկամուտներ --------- 2628.6 հազ.դրամ
   այդ թվում՝ --- Համայնքի սեփականություն հանդիսացող գյուղ նշանակության հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարներ -- 1898.4 հազ. դրամ
   Տեղական վճարներ / Աղբահանության վճար / -- 730.2 հազ. դրամ
   ե. Ընթացիկ տարվա ֆին.համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա ---- 9921.5 հազ. դրամ
   զ. Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ ------ 11.9 հազ. դրամ

Ը ն դ ա մ ե ն ը՝ - 17623.0 հազ.դրամ

Հաստատել համայնքի 2019 թ-ի բյուջեի ծախսերը ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝

| N | բա-ժին | խումբ | դաս | Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների , խմբերի և դասերի անվանումը | ընդամենը | այդ թվում վարչական բյուջե | այդ թվում ֆոնդային բյուջե |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | 19420.6 | 17623.0 | 2297.6 |
| 1. | 01 | 1 | 0 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ արտաքին հարաբերություններ՝ որից | 16572.2 | 14274.6 | 2297.6 |
| ա | 01 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում | 16442.2 | 14144.6 | 2297.6 |
| բ. | 01 | 1 | 2 | Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ | 130.0 | 130.0 | |
| գ. | 01 | 3 | 3 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 15.0 | 15.0 | |
| դ. | 01 | 6 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 210.0 | 210.0 | |
| 2. | 04 | 0 | 0 | Տնտեսական հարաբերություններ | | | |
| ա. | 04 | 2 | 0 | Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն՝ որից | | | |
| 1. | 04 | 2 | 1 | Գյուղատնտեսություն | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2. | 04 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | 700.0 | 700.0 | |
| 3. | 05 | 1 | 1 | Աղբահանում | 730.2 | 730.2 | |
| 4. | 05 | 6 | 1 | Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասեին չպատկանող ) | 48.2 | 48.2 | |
| 5. | 06 | 0 | 0 | Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն | | | |
| ա. | 06 | 3 | 1 | ջրամատակարարում | 45.0 | 45.0 | |
| բ. | 06 | 4 | 1 | փողոցների լուսավորում | 200.0 | 200.0 | |
| 5. | 08 | 2 | 4 | Այլ մշակութային կազմակերպություններ | 120.0 | 120.0 | |
| 6. | 08 | 5 | 1 | Հանգիստ, մշակույթ և կրոնի գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ | | | |
| 7 | 09 | 1 | 1 | Նախադրոցական կրթություն / հողի գնում / | | | |
| 7. | 09 | 6 | 1 | Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություն | 80.0 | 80.0 | |
| 8. | 10 | 7 | 1 | Սոցիալական հատուկ արտոնություններ ( այլ դասերին չպատկանող ) | 300.0 | 300.0 | |
| 9. | 11 | 0 | 0 | Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր այդ թվում՝ | 400.0 | 900.0 | |
| 10 | 11 | 1 | 0 | ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ ըրից՝ | 400.0 | 900.0 | |
| ա. | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | 400.0 | 900.0 | |

Համայնքի 2018 թ- ի բյուջեի ծախսերը ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման

1. հոդված 4111 -- աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ – 12192.0 հազ. դրամ
2. հոդված 4112 – պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ -- 400.0 հազ.դրամ
3. հոդված 4212 -- էներգետիկ ծառայություններ --- 1003.8 հազ. դրամ
4. հոդված 4213--- Աղբահանություն --- 730.2 հազ.դրամ
4..հոդված 4214 – Կապի ծառայություններ — 58.0հազ. դրամ
5..հոդված 4231 – Վարչական ծառայություններ --- հազ. դրամ
6. հոդված 4232 – Համակարգչային ծրագրային ծառայություններ --- 15.0 հազ. դրամ
7. հոդված 4234 – Տեղակատվական ծառայություններ ---- 105.0 հազ. դրամ
8.հոդված 4235 – Կառավարչական ծառայություններ —- 130.0 հազ. դրամ
9.հոդված 4241 – Մասնագիտական ծառայություններ ---- 245.0 հազ. դրամ
10. հոդված 4251 –շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում ---- 900.0 հազ.դրամ
11.հոդված 4252 – մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում ---- 77.0 հազ.դրամ
12.հոդված 4261 -- Գրասենյակային նյութեր և հագուստ ----- 298.8 հազ. դրամ
13.հոդված 4267 -- Սնունդ և ըմպելիքներ ----- 120.0 հազ.դրամ
14.հոդված 4637 – Ընթ. դրամաշնորհներ պետ. և համայնք. ըչ առևտրային կազմ. ---- 80.0 հազ. դրամ
15.հոդված 4657 -- Այլ կապիտալ դրամաշնորհներ --- հազ. դրամ
16.հոդված 4729 -- Այլ նպաստներ բյուջեից ---- 300.0 հազ.դրամ
17.հոդված 4819 – Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին -- հազ.դրամ
18.հոդված 4822 -- Այլ հարկեր ---- 48.2. հազ.դրամ
19.հոդված 4823 -- Պետական տուրք --- 20.0 հազ. դրամ
20.հոդված 4891 -- պահուստային միջոցներ ---- 400.0 հազ.դրամ
21.հոդված 5112 -- Շենքերի և շինությունների կառուցում ---- հազ.դրամ
22.հոդված 5113 -- Շենք շինությունների կապիտալ վերանորոգում 1097.6 հազ.դրամ
23 հոդված 5122 -- Գրասենյակային և համակարգչային սարքավորումներ ---- 1200.0 հազ. դրամ
24.հոդված 5113 -- Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր -- հազ. դրամ
25.հոդված 5411 --Հողի գնում --- հազ.դրամ

**Ընդամենը ծախսեր -- 19420.6 հազ. դրամ**

1. Համայնքի վարչական բյուջեի 1039.2 հազ.դրամ և ֆոնդային մասի 758.4 հազ.դրամ տարեվերջի ազատ մնացորդը ուղղել համայնքի բյուջեի ֆոնդային մաս՝որից

ա/ 01.1.1. գործառնական դասակարգման 5122 տնտեսագիտական հոդվածին ,համակարգչային սարքավորումների ձեռք բերում - 700.0 – հազ.դրամ:

բ/ 01.1.1. . գործառնական դասակարգման 5411 տնտեսագիտական հոդվածին, համայնքապետարանի շենքի կապիտալ վերանորոգում -1097.6 – հազ.դրամ:

2. Համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ,համայնքի ֆոնդային բյուջե հատկացված 500.0 հազ.դրամը ուղղել՝

ա/ 01.1.1. գործառնական դասակարգման 5122 տնտեսագիտական հոդվածին՝ Գրասենյակային կահույքի ձեռք բերում – 500.0 հազ. դրամ

3. « ՀՀ բյուջետային համակարգի մասին » ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝

ա/ թույլատրել համայնքի ղեկավարին՝ կատարելու բյուջեով իրականացվող յուրաքանչյուր ծրագրի գծով սահմանված գումարի 15 % չափաքանակը չգերազանցող ներքին վերաբախշումները՝ ըստ տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև,

բ/ սահմանել, որ բյուջեով նախատեսված ծախսային ծրագրերի միջև վերաբախշումների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել այդ ծրագրերի համար հաստատված ընդհանուր գումարի 15 % -ը:

Ծաղկաշեն համայնքի ղեկավար / [signature] / Գ. Կարապետյան

իսկականի հետ ճիշտ է՝

Աշխ. քարտուղար / [signature] / Հ. Սարգսյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


գ. Ծաղկաշեն 3-րդ փող. N 31
էլ-փոստ tsaghkashen.gegharquniq@mta.gov.am
Հեռ. 077 870323

17.12.2018թ

### ՈՐՈՇՈՒՄ N 29

**13 դեկտեմբերի 2018 թ-ի N 10 նիստ**

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ-ի դեկտեմբերի 29-ի << Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին >> թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների և հիմք ընդունելով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 06.11.2018թ-ի թիվ 144 դրական եզրակացությունը և ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի , 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով ՝ Ծաղկաշեն համայնքի ավագանին

### ՈՐՈՇՈՒՄ Է

1.ՀՀ Գեղարքունիքի մազի Ծաղկաշեն համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.012հա /կադաստրային ծածկագիր՝05-046-0111-0001/ հողամասը փոխադրել էներգետիկայի , կապի , տրանսպորտի , կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ կապի գործառնական նշանակության /բջջային կայան/:

2. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակության իրավունքի պետական գրանցում կատարելու համար :

3. Պետական գրանցում ստանալուց հետո հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը ընդգրկել համայնքի հողային հաշվեկշռում:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ - 4 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

1.Խաչատրյան Կամո
2.Պետրոսյան Պետրոս
3 Օհանյան Ցոլակ
4 Օհանյան Էդիկ

Ծաղկաշեն համայնքի ղեկավար / / Գ. Կարապետյան

աշխ. քարտուղար / / Ձ. Սարգսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Ծաղկաշեն 3-րդ փող. N 31
էլ-փոստ tsaghkashen.gegharquniq@mta.gov.am
Հեռ. 077 870323
17.12.2018թ

## ՈՐՈՇՈՒՄ N 30

**13 դեկտեմբերի 2018 թ-ի N 10 նիստ**

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ-ի դեկտեմբերի 29-ի << Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին >> թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների և հիմք ընդունելով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 06.11.2018թ-ի թիվ 144 դրական եզրակացությունը և ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի , 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով ՝ Ծաղկաշեն համայնքի ավագանին

## ՈՐՈՇՈՒՄ Է

1.ՀՀ քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.01 հա / կադաստրային ծածկագիր՝ 05-046-0111-0049/ հողամասերը փոխադրել էներգետիկայի , կապի , տրանսպորտի , կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ կապի գործառնական նշանակության /բջջային կայան/:

2. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակության իրավունքի պետական գրանցում կատարելու համար :

3. Պետական գրանցում ստանալուց հետո հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը ընդգրկել համայնքի հողային հաշվեկշռում:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ - 4 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

1.Խաչատրյան Կամո
2.Պետրոսյան Պետրոս
3 Օհանյան Յոլակ
4 Օհանյան Էդիկ

Ծաղկաշեն համայնքի ղեկավար / / Գ. Կարապետյան

Աշխ. քարտուղար / / Հ. Սարգսյան